# Կանանց Զարգացման «Ռեսուրս կենտրոն» Հիմնադրամ

# Women's Development "Resource Centre" Foundation

ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Գորիս, Անկախության 7/14 ,հեռ.374 77 060699, էլ.փոստ goriswomen@gmail.com


No: 01/21

**«2» հուլիսի 2021թ.**

Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավար

Պարոն Ա. Առուշանյանին

Հարգելի պարոն Առուշանյան,

Գորիսի Կանանց Զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի գործունեությունը ուղղված է կանանց համար աշխատատեղերի ստեղծմանը, ձեռարվեստի, զբոսաշրջության ոլորտի զարգացմանը:

Հաշվի առնելով, որ Վերիշեն բնակավայրը զբոսաշրջության զարգացման առումով ունի լուրջ պոտենցիալ՝ խնդրում ենք Վերիշեն բնակավայրի մշակույթի կենտրոնից հատկացնել տարածք՝ արվեստների կենտրոն հիմնելու համար:

Կենտրոնում ներգրավված կլինեն բնակավայրի արվեստագետներ, արհեստավորներ, մշակութային կրթության անհրաժեշտություն ունեցող կանայք, որոնց շնորհիվ արվեստների կենտրոնը իր գործունեությամբ կարևոր դերակատարում կունենա տարածաշրջանում Զանգեզուրյան մշակույթը և ձեռարվեստը ներկայացնելու գործում:

Հարգանքով,
ԿԶՌԿՀ Գործադիր տնօրեն
Ռուզաննա Տոռոզյան

(ստորագրություն) /Կ.Տ./


«ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ՄՏԻՑ 3253
02 07 2021 թ.